

ճիշտը եւ սխալը: Որով՝ պիտի ներկայացնեմ վաւերագրութիւններ եւ ժամանակակից վկայութիւններ միայն, որոնք Յակոբ Դ. Ջուղայեցի Կաթողիկոսին կաթողիկոսական շրջանի գործին ու կեանքին կը վերաբերին:

Յակոբ Դ. Ջուղայեցի էջմիածնայ գահին վրայ յաջորդեց Փիլիպպոս Ա. Կաթողիկոս Աղբակեցիի, անոր մահէն (Մարտ 25) եւ թաղումէն (Մարտ 31), անմիջապէս վերջ կաթողիկոս օժուելով, Ապրիլ 8, 1655-ին:

Յակոբ Դ.ի կաթողիկոսանալուն աստիճան եղբայր Դիոնեսիոս, Պապական քարոզիչ Ի Սպահան կը գրէր Հոովմի Հաւատոյ Տարածման Ժողովին Ապրիլ 15, 1655-ին: «(Հայերը) իրենց հերձուածող վարդապետներէն խարուած ամէն ատենէ աւելի հակահրանք ցոյց կուտան (կաթողիկոսութեան դէմ): Սակայն իրենց Փիլիպպոս Պատրիարքը (Կաթողիկոսը) մեռած է, անոնք ուրիշ մը (Կաթողիկոս) բրած են Յակոբ կոչուած, որմէ ինչ որ բարելաւում կը յուսանք:»⁽¹⁾

Այս բարելաւումը կ'երեւի թէ ուշացաւ: Մինչեւ 1661 պէտք է դանք, որ վաւերագրութիւն մը, ժամանակակից վկայութիւն մը գտնենք, որ կարելի ըլլայ կերպով մը գործածել ի նպաստ նրման կարծիքի մը:

Յակոբ Դ. Կաթողիկոս կը գրէր Աղբակեցիին Պապին:

«Երբ քան երանեալ եւ նախամեծար Գրլխոյ՝ Հանրական եկեղեցեաց Քրիստոսի, եւ պարծանաց պատճառի քրիստոնէից տոհմի, սրբազնակատար Հովուապետի՝ ըստ ընտրութեան աստուածապետականի, եւ նախագահութիւն ունողի՝ Մեծին Պետրոսի Փոխանորդի, Վսեմազարդ եւ Սրբազան Հայրապետի՝ Տեառն Աղբակեցիի՝ սքանչելահոգի Փափի, Յակոբ նուաստ ծառայ Յիսուսի Քրիստոսի եւ շնորհօք նորին Կաթողիկոս Ամենայն Հայկազունեաց տոհմի: Ձի Քրիստոսէ աւանդեալ ողջոյնն առաքեմ իբրեւ գրով բայց նուիրեմ ճշմարտա-

պարզեւ սիրով, իմովք եպիսկոպոսական դասուք եւ համայն տեառնալիճակ պաշտօնէիւք, որոց ի միասին բոլորասահման ուխտականօք, եւ միահաղոյն հօտիւք, զվայելչական անձին ընծայումն խոնարհական գիմօք հատուցուք նախապատիւ Տէրութեանդ քում, ուղղասէր մտօք, ըզձապատում սրտիւ, յօժարատենչ կամօք. ըստ որում Քրիստոսի պատուիրանին, եւ աշակերտաց նորոյ կտակի պահանջի. եւ որպէս պատկեր եւ տեսակ՝ ճշմարտութեանն ունողաց ցուցանի: Գիտացէ մեծանձնութիւն Ձեր՝ զի լուեալ մեր վասն թագաւորաց քրիստոնէից խաղաղութեան եւ ընդ միմիանս հաշտութեան, կարի մեծ ուրախութիւն եղեւ սրտից մերոց, եւ գոհութիւն մատուցաք բարերարին Աստուծոյ: Քանզի զոր ինչ ի վաղուց հետէ փափաքէաք, եւ ուխտիւք զԱստուած աղաչէաք, զայս այժմ ահանջօք իսկ մերով լսեմք, եւ աչօք տեսանեմք, զի քրիստոսասէր Թագաւորքն՝ ջանիւ եւ միջնորդութեամբ Սրբութեանդ Ձերոյ ընդ միմիանս հաշտեցան: Եւ հաւատարի գիտեմք՝ թէ այսու ասուել բարձրացի եղջիւր կաթողիկէ եկեղեցւոյ: Եւ որ մինչեւ ցայսօր մաքուր Հարսն Քրիստոսի գոուզ զգեցեալ տխրէր՝ վասն անմիարանութեան եւ խոտովութեան քրիստոնէից, այժմ գուարձացեալ բերկրի եւ գոհանայ զԱստուծոյ: Այլ եւ մեզ այսու լինի միխթարութիւն եւ սիրտութիւն, որք եմք ի ներքոյ լծոյ այլազգեացս, եւ ահն ունիմք՝ թէ ոչ լիցի կոխան անուն Քրիստոսի ի մէջ թշնամեացն Սաշին Յիսուսի, այլ մանաւանդ բարձրացի, եւ մեք պարծեսցուք ի միասին հանդերձ ձեօք իբրեւ զանդամս Քրիստոսի. թէպէտ այժմ գորով ընդ իշխանութեամբ անողորմ բռնաւորաց, եւ չար պագանաց մատնեալ վասն մեզաց մերոց, յոյժ վշտանամք, եւ անտանելի սուղ ունի զսիրտս մեր, զի ի վեր քան զչափ բարձրացաւ խախտումն եկեղեցւոյ Քրիստոսի, եւ անկարգութիւն օրինաց, մինչ զի ոչ կարէ հայր ընդ որդւոյ խօսիլ, եւ մայր ընդ դստեր, եւ վարդապետ ընդ աշակերտի ի յահ հաւատոյ երանելոյ: Եւ ոչ որպէս եկե-

(1) A Chronicle of the Carmelites in Persia. vol. I